ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/4.2-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. հունիսի 20-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության հետ պայմանագրի կնքման գործընթացում տվյալների ճշգրտում:

Նշվեց, որ

Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված կազմակերպությունների՝ **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի, «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի և «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ** կնքվող պայմանագրերի շրջանակում, Մրցութային հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2025

թվականի հունիսի 20-ի դրությամբ պայմանագրերը գտնվում են համաձայնեցման փուլում, առաջարկում է կազմակերպությունների կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվներում ծրագրի տևողությունը նախատեսել նախկին 6 ամսվա փոխարեն 5 ամիս՝ հետևաբար կրճատելով տրամադրվող դրամաշնորհի գումարը:

Միաժամանակ նշվեց, որ վերոհիշյալ քննարկումը կազմակերպությունների հետ իրականացվել է աշխատանքային կարգով (բանավոր) և կազմակերպությունները, ընդունելով առաջարկը, շտկված ֆինանսական նախահաշիվները ներկայացրել են Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին (առկա է):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 3 (երեք) կազմակերպությունների հետ՝

- **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի հետ՝ **2,646,000** (երկու միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,
- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ի հետ՝ **2,717,500 (երկու միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,
- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի հետ՝ **2,789,000** (երկու միլիոն յոթ հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաջյան - _____

Ա.Ոսկանյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____